

Ռ Ա Ր Ո Յ Ա Կ Ա Ն Ք

Տարօրինակ օրէնքներ. — Կրորդ Աթե-
նացիք Համախմբութեամբ գերահանճար
իմաստնոց՝ կը վաւերացնէին ազգապղծու-
թեան անբնական օրէնքը, և Պղատոն կը
ջնջէր ու կ'եղծանէր ամուսնութեան սա-
տուածադիր կորգը, մի և նոյն ատեն
Սպարտա օրինաւոր կը քարոզէր զմանկա-
սպանութիւն, և կը հրամայէր որ բոլոր ան-
բարեկազմ ու վատաուող տղաք Երրօտաս
գետին մէջ ձգուին: Բայց ոչ թէ Յուուա-
ստան միայն այս տեսակ անպատեհու-
թեանց մէջ ընկեր էր, այլ նոյն իսկ և Ե-
գիպտոս մահուան պատիժ կը սահմանէր
կատու սպանողին, և Հռովմ' նուիրական
աքաղաղ կամ սազ սպանողաց: — Քաւ-
րոնտ Լոկրէացւոց օրինադիրն, սահմանեց
որ եթէ ժողովրդեան մէջէն մէկը առար-
կութիւն մ'ուզենայ ընել վարչութեան՝ Հա-
սարակաց գործոց վրայ, այս պայմանաւ
միայն կարենայ ընել, այսինքն թէ վարա-
նոցը չուան անցուցած ձերակուտին առջին
ներկայանայ. և Հոն կարծիքը զուրցնելէն
ետքը՝ թէ որ բարի ու ընտիր գատուելու
ըլլայ, գովուի առարկոյն իբրև իմաստուն
ու Հասարակաց բարւոյն ցանկացող. և եթէ
Հակառակն ըլլայ, իբրև յանձնապատասան
ու խռովարար, նոյն չուանով խեղդուի ու
ծով նետուի:

Այս ամեն օրէնքները Քրիստոսէ առաջ
էին. բայց որ զարմանալին է, նոյն իսկ և
ի մեր ժամանակն Հաստատուեցան ուրեք
ուրեք ասոնց նման օրէնքներ. Միքելան-
ճելոյի ատեն Պոլոնիա քաղաքին մէջ օտա-
րոտի օրէնք մը կար, ըստ որում ամին օ-
տարական պարտաւորեալ էր բուժ մատին
վրայ կնքամով կնիք մը կրել: Միքելան-
ճելոյ զանցառութիւն ընելով այդ օրինաց,
բանտարկեցաւ ու դատապարտեցաւ 50
Ֆրանց տուգանաց. բայց ինք անկորող
ըլլալուն, իր մէկ բարեկամին ձեռնտուու-
թեանը կարօտացաւ ազատելու բանտէն,
Թովմաս Մորոյին ամենաձանր պատիժն էր
անցընել մեղապարտին քթէն ու ականջ-
ներէն օսկիէ դանազան շղթաներ:

Ինճ և տասներորդ դարուն կուտք. — Լու-
չիա, ոչ ըստ սովորութեան, ձեռացը մէջ
գիրք մ'ունէր, որ ոչ վիպասանութիւն էր,
ոչ գբօսանաց գիրք: այլ պատմութեան,
հին ժամանակի պատմութեան:

Եւ մինչդեռ մտադրութեամբ ու ա-
խորժանօք կ'ընթեանուր, յանկարծակի
գիրքը ձեռացը վրայ կը ձգէ ու կը գոչէ.
Ո՛հ, այդ ինչ ծիծաղելի բան: — Ինչու է
զարմանքդ, կը հարցընէ մայրը: — Սոնպիսի
գլխակարգութեան մը Հասաց, կը պատաս-
խանէ դուտարը, որ Հեթանոսաց կրօնից
վրայ կը խօսի, յորում կը տեսնամ զկու-
պալաութիւն այն աստիճան զօրացած՝ որ
մինչև պաշտօն ու երկրպագութիւն կը մա-
տուցանեն եղեր ոչ միայն կենդանեաց՝ այլ
և ընդեզինաց: — Այո, որդեակ իմ, կը
յաւելլու մայրը, եղած է ժամանակ յորում
մարդկային միտքն ու սիրտը պատեալ էր
անհաւատաւի սխալանաց ու ժողորմեան
խաւարաւ. և սակայն կը Համարձակէր
քաղաքակրթեալ կոչել ինք գինքը, յառա-
ջադէմ ՚ի գիտութիւնս և յարուեստս:

— Յիրաւի դատարձաւի տեսարան մ'ըլլա-
լու է տեսնել Եգիպտոսցին ձերագրեալ կա-
տուի կամ սոխի կողովոյ առջին պատրաս-
տեալ ՚ի պէտս խոհանոցին, կամ խոնար-
հեալ յաղօթս Ասիա եզուն առջին: Ո՛հ, ինչ-
պիսի փոփոխութիւնք տեղի ունեցան յըն-
թացս ինն և տասն դարուց. ո՛հ, ինչպիսի՛
յիմարտութիւն կը թուին այսօր այդ կու-
քերը քրիստոնէութեան լուսոյն առջին: Այս
օրուան օրս կուպալաւութիւնն ամենեկին
տեղիք չունի, և անկարելի ալ է սր ու-
նենայ:

— Կը խարուիս, Լուչիա, կ'ըսէ մայրը.
նոյն իսկ մեր դարն ու ժամանակն ունի իր
կուռքերը: — Այո, կը պատասխանէ օրիոր-
դը, յԱփրիկէ, յԱփրիանիա և ուրիշ բարբա-
րոս երկիրներ ուր չէ ծագեր լոյս քրիստո-
նէութեան, կը գտնուի կուսմոյ ժողովուրդ-
ներ: — Այ, նոյն իսկ մեր աշխարհն ու
ընկերութիւնը՝ որ կը պարծի ճշմարիտ քա-
ղաքակրթութեամբ՝ ունի իր կուռքերը: այո,
կայ կուռք մը որուն զու իսկ եռանդուն
երկրպագու ես: — Ե՛ս. ինչ է արդեօք
այդ կուռքը: — Այո՛ գու, բայց ոչ թէ
գու միայն: Այնպիսի կուռք մ'է, որուն
գրեթէ ամենայն կանայք պաշտօն կը մա-
տուցանեն. զօրաւոր բռնաւոր մ'է, և մեծ
ու զօրաւոր ազնեցութիւն ունի մեր դա-
րուն ու ժամանակին վրայ, աւելի քան ինչ
որ այդ կուռքերն՝ որոց վրայ կը ծիծաղիս,
իրենց պաշտօնատարաց վրայ, Կիտէ, չկայ
Հասակ՝ որ ենթարկեալ չըլլայ անոր օրի-

նաց: — Ով մայր, կ'ըսէ օրիորդը, կուտակ կ'ընես. չեմ իմանար միտքդ, աւելի բացայայտ խօսէ: — Ո՛րչափ գոհ ու զբոհվաւոր չեն ընե՞ր կանայք, որդեկի իմ, 'ի պաշտօն այդ կոտջ. կը գոհնեն իրենց ծամանակը, շնորհքը, վայելչութիւնը, հանձարը, հարստութիւնը, նոյն իսկ երբեմն և առողջութիւնը, և այս ամեն բաներն ուրախութեամբ ու յօժարութեամբ: Եւ այս կ'ուզեն է, թէ որ կ'ուզես լսել, նորաձեւութեան (mode) անխորհուրդ սէրը ու մղուճը որ դարուս սեփական կնիքն է: Նորաձեւութիւն. ո՛հ ինչպիսի հրապուրիչ ու վտանգաւոր խաբէութիւն: Այո, գուտար իմ, ոչ մի կռապալտութիւն կրցաւ չնչելի բերկրբպագուաց այնպիսի տարօրինակ յիմարութիւն՝ ինչպէս ասիիս, որ ոչ միայն կը մթազնէ մարդկային միտքը, այլ նոյն իսկ և առաքինութիւնը: Ա՛հ նորաձեւութեանց. ահաւատիկ ընկերութեան և մասնաւոր կերպով ընտանեաց ապականութեան ու կործանման պատճառը:

Չգոչուցէք 'ի փաստիրաց. — Այդ ջրոյ փորրիկ առուակն, զոր թերեւ առիթ ունեցած ես տեսնալու իջնակ լերանց կողմընէ, ո՛ր ընթերցող, զուցէ անվտանգ ու անպէտ համարած ես 'ի սկզբան: Բայց այդ արհամարհ առուակը շարունակելով իր ընթացքը, նախ անտեսանելի փորուածք մը կը գործէ աւազոյ վրայ. ապա ոտն առ ոտն կը լայնէ անկողինը ու սահմանը. ընդարձակ գետ մը կը ձևանայ. և այլ չես կըրնար առջև առնուլ. կ'ողողէ զանդաստանս ու հեղեղասաստ թափով առեալ կը տանի հողագործին քրտանց ամենայն արդիւնքը: — Աւաղ մեզ. ո՛րչափ սնգամ ապագայն չի մտածելնիս փաստաբեր ու մահաոթիթ եղած է, մինչդեռ հակառակաւ կըրնար օգտակար ըլլալ:

Մակայն ամենեկին նոյնը կը պատահի նաև փաստիրին. գոհ չըլլար պղտի յաջողութեամբ միայն ու չափաւոր փառաց աստիճանաւ. այլ կը ձկտի ու կը ցանկայ մեծագոյն ևս պատիւններու, և հետևաբար կը ջնայ կորստանել ինչ և է միջոցաւ զամենայն արգելս, որ կրնան խախտնել իւրիք իր դիտաւորութիւնքը:

Այսօ՛ր ինչպէս այդ զուարթ առուակը,

զոր եթէ ջանայինք իր առաջին դրոյց մէջ բռնել օգտակար կ'ըլլար, և ընդհակառակն փաստակար եղաւ, նոյնպէս և փառասէրն, որ մտկալ 'ի սէր փառաց և բարձից, թէ որ քիչ մ'առապարէզ գտնալու ըլլայ, կը գոհնէ զմերձաւորս, զընտանիս, զընկերութիւն, զհայրենիս, և որ ահաւորն է՝ նոյն իսկ և զԱստուծոյ իր շահուցը, նպատակ դնելով իրեն գիտած և զգտնուիւ: Չգուշանանք որբեմն փառասէրները իշխանութեան հասցընելէ:

Շինական և Փաստաբան. — Որին մէկը խեղճ շինական մը փաստաբանի մը կ'երթայ, խորհուրդ հարցընելու կարեւոր գրամական խնդրոյ մը նկատմամբ. և կարծելով որ եթէ լաւ մտարեալ ըլլայ՝ յաջող պատասխան կ'ընդունի, ձեռքին մէջ գեղեցիկ սկուտներ առած, կ'ուզէ անոնցմով հրապուրել փաստաբանը:

Փաստաբանը կ'իմանայ միտքը, բայց չուզելով շինականին խորամանկութենէն խաբուած համարուիլ, կ'ըսէ. Գատգ անյաջող է. և սպաշուղաբար կը կորուսանես:

Այն ատեն շինականը կը ծածկէ դրամը, ու մեծարանքը մատուցանելով՝ կը պատրաստուի դուրս ելլելու: Իսկ փաստաբանը տեսնելով որ անյաջող գնաց գործը, կը կանչէ զինքը, ու խօսիցը տարբեր կերպարան մը տալով, կ'ըսէ.

Գու, ո՛վ սիրելի, շատ պատրաստական կ'երեւաւ փորրիկ գծուարութեան առջին անյուսութեամբ մէկէն տեղիք տալու. չես գիտեր որ աշխարհիս գործերը երկու կերպարան սւնին, և ես առաջինը միայն պարզեցի քեզի:

Շինականը մտադրութեամբ փաստաբանին նոր փաստերը լսելով՝ զարմացաւ. և հանելով նորէն զբպանէն արծաթի գեղեցիկ սկուտները, տուաւ փաստաբանին գոհ զէմբով:

Այն ատեն փաստաբանը խեղճ շինականին դրամը գրպանը դնելով, կ'ըսէ. Ահաւատիկ քեզի երրորդ խորհուրդ մ'այ որ ձրի է, և որուն 'ի վարձ ամենեկին բան մը չեմ պահանջեր. կրկու կարծիք դրի առջևդ. լաւը առաջինն էր, և երկրորդը ամենեկին բան չա՛մբեր. հետեւ առաջնայն: